

գիրքը կարգալույլ պէտք է նաև կատարենք քմբռնածներու:

— Աչքերդ ուղիղ պահիր, լեզուդ զգաստ, խոյս տուր դատարկ բաներ լսելուց: մահդ միշտ աչքի առաջ ունեցիր: մի՛ ճարկանար, հրաժարուի՛ր նիւթապաշտութիւնից և մարմնական հեշտութիւնից, ամեն ժամ աղօթի՛ր և քո ամեն գործերդ և մտածութիւններդ ուղղութեամբ լինեն գէպի Առտուած. ոյ՛ այսպէս անէ, նա կատարեալ կը լինի:

— Եթէ մէկը կամենում է տուն շինել, նախ ժողովում է ամեն տեսակ հարկաւոր նիւթեր, այսպէս և մենք եթէ կամենում ենք կատարեալ լինել, պարտաւոր ենք ամեն տեսակ առաքինութեանց տիրանալ:

— Ամենայն զուշութեամբ աշխատիր չըմեղանշել, որ քո մէջ բնակած Առածուն չանարգես և չհեռացնես քեզանից:

— Մի հողագործ մշակ շատ հարստացաւ. նա կամենալով, որ իւր որդիներն էլ շարունակեն իւր մշակութիւնը, ասաց նրանց. դիտէ՛ք, որդիներ, ինչպէս ես հարստացայ. նրանք ասացին. «աղաչում ենք, սովորեցրու»: Հայրն ասաց. «տարուայ մէջ մի օր կայ, ոյ՛ որ այն օրը գործի մէջ լինի շատ կհարստանայ, միայն ծերութիւնից մոռացել եմ չեմ կարող ասել, թէ այդ օր օրն է. ուստի դուք մի ծուլանաք, ամեն օր աշխատեցէ՛ք, որ այն օրհնեալ օրը ձեր ձեռնից չանցնի»: Այսպէս ամեն բանի մէջ միշտ աշխատելով միայն մենք կը գտնենք վերկութեան ճանապարհը:

— Էին հռոմայեցիք իրենց վարժամ տաճարներն ճակատներին դռում էին՝ *memento mori!* յիշի՛ր մահը. իսկ եգիպտացիք իրենց նշանաւոր խնջոյքներում առաջին տեղը բաղմննում էին մի ննջեցեալի մոմիս— զմռտուած դիակի ինքնամոռացութեան մէջ չընկնելու համար: Արքայամբեր գնաց Աւետիաց երկիրը, նախ իւր համար գերեզման գնաց:

— Մեր սիրտը ոտեղծուած է Առածու բնակարանը լինելու համար:

— Դատարկութիւնը մահ է բերում. դատարկ մարդու աղօթքն անընդունելի է. մարդ պէտք է կարողանայ իւր ձեռքի աշխատանքով գոնէ մէկ ուրիշ կարօտ մարդու կերակրել:

— Մի անգամ հայր Մակարի համար խաղող բերին. թէպէտ շատ կարօտում էր ուտել, բայց իրեն զսպեց, ուղարկեց խաղողը մի այլ հիւանդ եղբօր. սա էլ ստանալով շատ ուրախացաւ, բայց չը ճաշակեց, այլ ուղարկեց մի ուրիշ տկար եղբօր համար: Բանն այնպէս եղաւ, որ սա էլ բարւոք համարեց ուղարկել խաղողը մի այլ տկար միաբանի. սա էլ ուղարկեց միսթարելու համար մի ծեր միաբանի. սա էլ բնգունելով խղճահարուեց ճա-

շակել, այլ լաւ դատեց իրենց մեծին՝ հայր Մակարին՝ նուիրաբերել: Հայր Մակարը վերստին ստանալով վերոյիշեալ խաղողը, որ բոլոր եղբայրներն խցերը պտտել և ոչ ոք չէր ճաշակել, վերջն էլ եկել էր իւր մօտ, գոհութիւն ու փառք տուաւ. Առածու, որ այսպիսի եղբայրութիւն է թաղաւորում միաբանների մէջ, ու միւս օրը խաղողը տարաւ եկեղեցի և որպէս օրհնութիւն բաժանեց բոլորին:

— Պտղաբերութեան սկիզբն է ծաղիկը և առաքինութեան սկիզբը համբերութիւնը:

— Արօնաւորի առաքինութիւնները փորձութիւնների մէջ պիտի փայլեն և փառաւորուեն:

— Առաքինութիւնը ամօթխած է. քողարկեալ կամ ծածկեալ առաքինութիւնը մեծ գեղեցկութիւն ունի:

— Մարգահանութիւնը թուլացնում է կրօնաւորի զօրութիւնը և դարձնում է մի ցամաք իր:

— Մնափառութիւնը նման է բաղեղի, որ ծառի ծայրը հասնելով չորացնում է նորան:

Ն. արևղայ Տ: Աւետիքեան

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Մեր ընթերցողներին յայտնի է ռուսաց եկեղեցւոյ հանրածանօթ սպասաւոր հ. Յովհան Սերգիև Առնշտատցու որբակենցաղ վարքի և առատաձեռն բարեգործութեանց հռչակը: Առնշտատը բառիս իսկական նշանակութեամբ ուխտաւեղի է դարձել ռուս հաւատացեալներին համար, որոնք հաղարներով ղկմում են ամէն օր Ռուսաստանի նոյն իսկ ամենահեռաւոր կողմերից տեսնելու, լսելու հ. Յովհաննին, խոստովանուելու և հաղորդուելու նորա ձեռքով:

Ամենայն օր հաղարաւորներն են ցանկանում խոստովանուել նորա մօտ և հաղորդուել. բնական է, որ միանգամայն անճարին պիտի լինէր մի մարդու համար այդքան հողուն առանձին առանձին խոստովանեցնել: Այս պատճառով հ. Յովհաննը սահմանել է իւր ծխական եկեղեցումն ընդհանուր, հատարակաց խոստովանութեան օրեր. այդ օրերում ինչպէս և առ հառարակ երբ հ. Սերգիևը պաշտօն է մատուցանում, ժողովորդըն այնպէս է խոնրուում եկեղեցւում, որ ինչպէս ասում են ասեղ քցելու տեղ չէ լինում:

Մայիսի 17-ին, ընդհանուր խոստովանութեան միջոցին, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրները՝ այնպիսի խուռն բազմութիւն է ժողովուած լինում եկեղեցում, որ չնայելով բազմութիւն ոտտիկանների ջանքին հար չէ լինում կարգ պահելու եկեղեցու մէջ, երբ հաղորդութիւնն է սկսուում. ամէն մարդ շտապում է առաջ ընկնել աւելի շուտ հաղորդ ընդունելու սրբակրօն քահանայի ձեռքից: Այդ իրարանցման մէջ շատերը ոտի տակ են դնում, ու վերաւորուում, իսկ մի կին տեղնուտեղը մահանում է:

— Վլադիմիրի նահանգի Շուշեա քաղաքում, ինչպէս հաղորդում է НОВ. ВР. լրագիրը, վերջերս մի հետաքրքրական և հազուադէպ դործ է քննուել Վլադիմիրի դատաստանական պալատի սենսիայում: Մի աւանի եկեղեցու ծխականներից մի քանիսը մեղադրուած են եղել իրենց քահանային եկեղեցու մէջ, պաշտօն կատարելու ժամանակ, «գործողութեամբ» անպատուելում և բռնութեամբ ժամատացութիւնը դադարեցնելում: Դատարանի նիստը գոնիակ է եղել, այնպէս որ գործի մանրամասնութիւնները յայտնի լինել չեն կարող. բայց մայրաքաղաքի լրագիրը դատաւորների վճռից որոշ եզրակացութիւն է անում գործի էութեան մասին:

Բանն այն է, որ նահանգական դատարանը բոլոր մեղադրեալներին էլ արգարացրել է. պրոկուրորը բողոքել է այդ վճռի դէմ. գործն անցել է պալատը, որ ահա հաստատում է նահանգական դատարանի վճիռը և անհետանք թողնում պրոկուրորի բողոքը:

Դատարանի երկու ինստանցիայում ևս իրենց քահանային այդպիսի բացառիկ հանգամանքներում անպատուելու համար մեղադրուող գիւղացոց արգարացնելը, НОВ. ВР. ասելով, ապացոյց պէտք է համարել, որ յիշեալ քահանան մինչ այն ատիճան վերաւորել է իւր հօտի կրօնական զգացմունքները որ և է անվայել արարքով, նոյն իսկ եկեղեցում և ժամ ատելիս, որ աղօթողներն այլ ևս չեն կարողացել համբերել և բռնութեան են դիմել:

— Մայրաքաղաքի լրագիրներում կարգում ենք, որ Վրաստանի էջզարխ սրբ. Քլաւեանը գիմել է ուր հարկն է և միջնորդել, որ Պետերբուրգի հոգևոր ձեմարանում հաստատուի վրաց եկեղեցու պատմութեան յատուկ ամբիոն: С.-Петербург. Вѣд. համակրութեամբ է վերաբերում այդ մտքին և վրաց հաղարեան եկեղեցու պատմութեանն այդպիսի պատուաւոր տեղ տալը մայրաքաղաքի հոգևոր ձեմարանում թէ արգարացի է համարում և թէ խոհեմ քաղաքականութեան մի նշան դէպի վրացիները, որոնց վատահոլութիւնը վատասկելու միջոցներից մէկը կարող է լինել այդ

ջայը: Լրագիրն ի դէպ նկատում է, որ սրբ. Քլաւեան էջզարխը յարգանքով է վերաբերում դէպի վրաց ազգային եկեղեցին և նորա հոլութեան յիշատակարանները:

— Ամսոյս 7-ին վախճանուեցաւ Կիւմի մեարապոլիս սրբազան Իոաննիկէյ, Հանգուցեալ մեարապոլիտը Ռուսաստանի ամենանշանաւոր եկեղեցականներից մէկն էր իւր արդիւնաւոր գործունէութեամբ: Մի ժամանակ Վրաստանի էկզարխն էր: Անցեալ տարի նոյեմբերի 7-ին մեծ շքով Կիւմում տօնուեցաւ հանգուցեալի 50 ամեայ քահանայութեան յորելեանը: Հանդիսի նկարագրութիւններն ու կենսագրական համառօտ տեղեկութիւններ անս Արարատ 1899, դեկտ.

ԿԱՅՈՒՆԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Առումպսիոնիսները եւ ժամնիական կառավարութիւնը. Քլանսիական ներկայ կառավարութիւնը թէ և կաթողիկոսութեան բարեկամ չէ, բայց ստիպուած է նորա դորութիւնից անխածել. Այդ շատ լաւ երևում է դէպի Առումպսիոնիսները բռնած գիւղից: Մեր ընթերցողները կարգացին արդէն «Օտար եկեղեցիներ»-ի բաժնում այս միաբանութեան մասին, բայց գուցէ որոշ գաղափար չունենան նորա կոչման և ծագման վերաբերութեամբ:

Այս միաբանութիւնը հաստատուած է 1857 թուին Ֆրանսիացի Ալցոն անունով մի քահանայի ձեռքով: Իւր ձգտումներով Յիսուսեան կարգի նման մի միաբանութիւն է. նորա նպատակն է վերականգնել պատանիների քրիստ. կրթութեան իրաւունքը, մաքաւել յեղտիտիսութեան և հերձուածների դէմ:

Առումպսիոնիսների կարգը պապական ատիտից հաստատուած չէ, իսկ Ֆրանսիական կառավարութեան կողմից 1880 թ. միւս միաբանութիւնների հետ արգելուած է: Բայց և այնպէս միաբանութիւնը տարեցտարի հարստանում և մեծ ազդեցութիւն է ձեռք բերում պետութեան մէջ, Առումպսիոնիսների գործունէութիւնը շատ ընդարձակ է և ճիւղաւորուած երկրի ամեն կողմերում, նոցա գործունէութիւնը երեք ուղղութեամբ է ընթանում՝ կրօնական, գրական և քաղաքական, բայց երեք ուղղութեամբ էլ մի և նոյն նպատակի համար են աշխատում: Նոցա զբաղան գործունէութեան կենդրոնը „la Bonne Presse“ տպարանն է, ուր հրատարակում են բազմաթիւ ամսագրեր և քաղաքական թերթեր: Նոցա թերթերի բոլոր օրինակներն թիւը մինչև 130 միլիոնի է հասնում. թերթերից ամենանշանաւորը La Croix թերթն է, որ առանձին տեսակ հրատարակութիւններ ունի նաև գաւառների համար: Միաբանութիւնն իւր առանձին յանձնախումբն ունի—

Justice Egalité—անունով, որ ղեկավարում է քաղաքական ընտրութիւնները, ընտրութեան դաշինք է կապում այս կամ այն կուսակցութեան հետ և հսկում է իւր ձեռնտուութեամբ ընտրուած պատգամաւորներին գործունէութեան և մինչև իսկ սոցա մասնաւոր կեանքի վերայ:

Վառավարութեան և միաբանութեան ընդհարումը յառաջ է եկել վերջնոյս քաղաքական գործունէութեան պատճառով: Առումպսիոնիստների և արքայականների դաշնակցութեան պատճառով խուզարկութեան ենթարկուեցան և միաբանութեան շատ անդամներ, երբ կառավարութիւնը դատ սկսեց արքայականների դէմ, որպէս կառավարութեան դաւաճաններ: Խուզարկութեան ժամանակ զբաւուեցան հակահառավարչական բազմաթիւ ձեռագիր և սպուած գրութիւններ և մի պատէրի մօտ գտնուած 1,800,000 ֆրանկ դրամը: Այս խուզարկութեան հետեանքն այն էր, որ կառավարութիւնը դատ բաց արաւ միաբանութեան 12 անդամներին դէմ, արդէն լուծած ընկերութիւններ կազմելու համար: Գատապարտուածները 16-ական ֆրանկ տուգանքի ենթարկուեցան: Բարձրագոյն դատարանը հակառակ դատապարտուածներին բողոքներին փետր. 19-ին հաստատեց նոյն վճիռը:

Բայց կառավարութիւնն էլ իւր կողմից այս գործողութիւնը հեշտ մարտել չկարողացաւ: Բազմաթիւ եպիսկոպոսներ և քահանաներ Croix թերթի մէջ բողոքեցին կառավարութեան դէմ՝ պաշտպանելով Ասումպսիոնիստներին: Բողոքողներին մէջ ամենից աչքի էր ընկնում Գուլթե—Սուլար Արքեպիսկոպոսը, Վառավարութիւնը իւր կողմից աւելի խիստ միջոցների դիմեց, կտրելով ապստամբ եկեղեցականների ռոճիկը: Վալդէկ—Ռուսոն մի գրութեամբ յիշեալ Արքեպիսկոպոսին յայտնում էր նախարարութեան վճիռը՝ պատճառաբանելով որ ոչ մի կառավարութիւն չէ կարող տանել այն դիրքը, որ արքեպիսկոպոսը բռնել է պետութեան դէմ: Արքեպիսկոպոսը իւր կողմից մի գրութեամբ ամենախիստ պատասխան է ուղղում միսսալին Croix թերթի մէջ, «անամօթ» անուանելով նորա գրութիւնը և «գողութիւն» նորա ռոճիկի պահելը: Մի ուրիշ գրութիւն ևս ուղղում է պապին, որի մէջ ֆրանսիական օրէնստուութիւնը «ազանգաւոր» և «աւազակային» է անուանում: Ասումպսիոնիստների մասին Արքեպիսկոպոսի պապին ուղղած նամակի մէջ խօսում է մեծ յարգանքով և աւելացնում է. «մենք մոհուան ենք դատապարտուած, բայց կպաշտպանենք մեզ»:

Վաթիլիկ հոգևորականութեան բռնած այս դիրքը աչքի առաջ ունենալով, կառավարութիւնը կամեցաւ խստացնել օրէնքը այդպիսի դէպ-

քերի համար: Վառավարութիւնը պաշտին է հաստատութիւն մի նոր օրէնք առաջարկեց, որով եկեղեցականները 3 ամսից մինչև 2 տարի բանտ պիտի նստէին: Եթէ իրենց հովուական թղթերի կամ առանձին գրութիւնների մէջ կառավարութեան կարգադրութիւնները քննադատութեան կենթարկեն: Բայց այս օրէնքը դեռ չէ հաստատուած և հաւանական է, որ մերժուի, որպէս ֆրանսիայում տիրող ազատութեան հակառակ մի օրէնք:

— Վալդէկ Ռուսոյի նախարարութիւնը անյաջողութիւն ունեցաւ նաև Վատիկանում ֆրանսիական դեսպանութեան վերացման խնդրում: Վառավարութիւնն ստիպուած է քուղաքական դժուարութիւններ տեսակէտով հրաժարուել Վատիկանում ֆրանսիական դեսպանութիւնը ոչնչացնելու մաքեց:

— Նապոլէոն Ա.-ի ժամանակից պետութեան և պապական աթոռի մէջ հաստատուած համաձայնութեամբ (concordat) ֆրանսիայի եպիսկոպոսների և քահանաների ռոճիկը պետութիւնն է հոգում: Սակայն այժմ 35 եպիսկոպոս և 7000 քահանայ աւելի են ֆրանսիայում, քան նախատեսուած է կոնկորդատում: Վառավարութիւնը շատ կկամենար կրճատել այս ծախսերը, բայց ստիպուած է լռել, ակնածելով քաղաքական դժուարութիւնները:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

ԳԵՐՄԱՆԻԱ

Եկեղեցական—սոցիալական ազատ ժողովի եւ—րդ ճիւղը:— Այս ժողովը բաժանուեցաւ քրիստոնէական—համայնական ժողովից, որ Գերմանիայում մեծ հեղինակութիւն ունի և որին մասնակցում են դիտնական բարձր դասին պատկանող նշանաւոր անձնաւորութիւններ, յատկապէս անտուածաբանութեան ուսուցչապետներ և քահանաներ, Բաժանման առիթն եղան նոյն ժողովի անդամ երկու նշանաւոր անձինք՝ ուսուցչապետ ֆոն Նաթուսիուս և Նախկին պալատական քարոզիչ Հաեռիկէր: Ժողովից զԳերմանիան և վերջիններին կուսակիցները հետզհետէ հաւաքուեցան իրենց պարտադրութիւնների շուրջը և մի առանձին ժողով դաւարեցին Kirchlich—sociale Conferenz անունով, որի հինգերորդ ժողովը գումարուեցաւ ներկայ թուի ապրիլ 18—20-ին Էրֆուրա քաղաքում, 1000 հոգու մասնակցութեամբ: Ժողովը երկու մասից էր բաղկացած. դիւսաւոր և երկրորդական կամ մասնաւոր: Մասնաւոր ժողովների պարագլուխները Եթ խմբի են բաժանուած. իւրաքանչիւր խմբին յանձնուած էր որոշ խնդիրների մասին հարցեր մշակել և ժողովի քննադա-

տութեան նիւթ դարձնել: Մենք յիշենք միայն իւրաքանչիւր խմբի մշակութեան խնդիրը մեր բնթերցողներին գերմանական պատարանների մտաւոր հասունութեան և հասարակական գործունէութեան մասին գաղափար տալու համար: Առաջին խմբի նախագահը յայտնի քարոզիչ, Բերլինի քրիստոնէական բարեգործութեան ղեկավար և անուանի քաղաքագէտ պատարան Հաեռիկէն էր: Այս խումբը պէտք է զբաղուէր դաւանաբանական, եկեղեցական— իրաւագիտական և եկեղեցական— քաղաքագիտական խնդիրներով: Երկրորդի նպատակն էր մշակել աւետարանի քարոզութեան և համայնական կեանքի զարգացնելու հարցեր: Երրորդը պետի պարզէր սոցիալական խնդիրներ քրիստոնէական տեսակէտով, չորրորդը մասուլի, արուեստ և դրամատիկան: Տինգերորդը քրիստոնէական կրօնի ջատագովութիւն՝ յատկապէս բնական դիտութիւններն աչքի առաջ ունենալով, վեցերորդը դաստիարակութիւն և զբոսը, վերջապէս եօթներորդը՝ կանանց հարցը:

Գլխաւոր ժողովներն մէջ դասախօսութեան և քննութեան նիւթ են եղել հետեւեալ հարցերը. ա) Անհատի և ընդհանրութեան մեղքի պարտքի գիտարարում, անհատի և ընդհանրութեան գործունէութիւնը. բ) Կոնֆորմացիայի (առաջին հաղորդութիւն ընդունելու կարգը) գործածութիւնը. գ) քահանայն և համայնքի անդամները. դ) քաղաքացիական նոր օրէնսդրելի սոցիալական մարքերը. ե) քրիստոնէական աշխատութիւնը տներում աշխատող բանւորութիւնների համար. զ) բժիշկ կանայք պէտք է համալսարանում պատրաստուին իրենց մասնագիտութեան համար, թէ կանանց առանձին բարձրագոյն դպրոցներում:

— Գեոթինգէնի համալսարանի աստուածաբանութեան մասնաւոր ուսուցչապետ Օտտոն մայիս ամսուայ ընթացքում Համնովերում մի շարք հանրամատչելի դասախօսութիւններ է կարդացել ու Գրքի քննադատական գիտութեան նորագոյն եղբակացութիւնները իւր ունեւորներին ծանօթացնելու համար: Երկու տեսակէտով օգտակար են այսպիսի դասախօսութիւնները. խիստ պահպանողական և հին պատարաններին ծանօթացնելու աստուածաբանական ներկայ գիտութեան վիճակի հետ և միւս կողմից աստուածաբանութեան հակառակորդներին ցոյց տալու, թէ յառաջագիմութեան որպիսի մեծ քայլեր է արել վերջին տասնեակ տարիներում այդ գիտութիւնը:

— Նոյն նպատակով Սաքսոնիայի Խեմնից քաղաքում 200 ունեւորներին համար, որոնց մեծ մասը պատարաններ էին, Հայդելբերգի ուսուցչապետ Տրեյուտէ մի դասախօսութիւն է կարդացել աստուածաբանական ներկայ գիտութեան վիճակի մասին:

— Ընդհանուր աւետարանական— բողոքական քարոզչական ընկերութիւնը Ճափոնիայում իւր քարոզիչների ձեռքով հրատարակում էր ճափոներէն լեզուով մի ամսագիր «Ճամբարութիւն» անունով: Այս ամսագիրը մեծ յաջողութիւն էր գտել Ճափոնիայում: Ներկայ թուականի սկզբից Հաս պատարանի խմբագրութեամբ հրատարակուում է մի ուրիշ թերթ Նոյն վերնագրով, գերմաներէն: Բնիկ մի ուսուցչապետի վկայութեամբ Ճափոնիայում այնքան գերմաներէն գիտեն, որ թերթը բաւականաչափ բաժանորդներ կունենայ իւր գոյութիւնը պահելու համար: Այս մի նշան է, թէ քրիստոնէական—գերմանական քաղաքակրթութիւնը սրբան է տարածուած այնտեղ:

ԱՆԳԼԻԱՅԵՆ ԵԿԵՂԵՑԻ:

Անգլիայի պետական եկեղեցու մէջ վաղուց, ինչպէս յայտնի է, շարժում է նկատուում նորագէտ ծէսերն ու արարողութիւնները, որ կրօնական հին եկեղեցու վերափոխութիւնը (րեֆորմացիան) ոչնչացրել էր: Այս շարժման կողմնակիցները միւս բողոքականներին ծխապաշտ անունն են ստացել: Վերջին տարիներս վիճաբանութեան նիւթ էր խնկարկարեան և ու հաղորդարիւնը (մասը) պահելու խնդիրը: Բեֆորմացիայից յետոյ անգլիական եկեղեցու մէջ վերացել էր ու մասը պահելու սովորութիւնը, որ մեր եկեղեցու մէջ մինչև այժմ էլ մնացած է: Այդ սովորութիւնը յառաջ է եկել հիւանդներին հաղորդելու անհրաժեշտ կարիքից:

Մայիսի 1-ին անգլիական եկեղեցու երկու արքեպիսկոպոսները յայտնել են իրենց վճիռը այդ մասին: Անկասկած հին եկեղեցին սովորութիւն է ունեցել հիւանդներ և նման դէպքերի համար պահել ու մասը: Բայց անկասկած է նոյնպէս, որ այս սովորութիւնը, մանաւանդ փոխակերպութեան (transubstation) դաւանութիւնը ընդհանրապէս յետոյ այլ և այլ հաւատալիքների ծագման պատճառ է դարձել: Ուստի և անգլիական եկեղեցին իւր 28-րդ կանոնով (րեֆորմացիայի 39 կանոնները) արգելել է այս սովորութիւնը: Ըստ 34-րդ կանոնի իւրաքանչիւր մասնաւոր կամ ազգային եկեղեցի իրաւունք ունի փոխել կամ վերջացնել մարդկանց ձեռքով հաստատուած ծէսերն ու պաշտամունքներ: Քանի գոյութիւն ունին եկեղեցական ներկայ օրէնքները, պէտք չէ պահել ու մասը ինչ ձևով էլ լինի: Այլ խնդիր է, երբ եկեղեցին իրաւաբանական ճանապարհներով փոխել իւր օրէնքները այս կէտի վերաբերութեամբ:

Հակառակորդները սակայն դժգոհ են այս վճիռից և մինչև իսկ լուրջ քննադատութեան արժան չեն համարում այն: Նորա բողոքում են, թէ արքեպիսկոպոսները իրաւունք չունին արգե-

եւ երկրպագելու Տիրոջ: Բանի դոյութիւն ունիս. հաղորդութեան խորհուրդը, չպէտք է նուազի և բրիստոնեայի երկրպագութիւնն ու գոհութիւնը Տիրոջ: Մենք կապուած չենք այն բոլոր կարգադրութիւններին հետ, որ 16 դարում մի քանի մարդիկ ռեֆորմացիա անուան տակ մասամբ լուծ մասամբ վատ՝ հաստատեցին: Մենք կողմնակից ենք լուծին, և հրաժարուում ենք վաղից: Բեֆորմացիան պատմական մի շրջան էր եկեղեցու մէջ, ուստի և ռեֆորմացիայի մարդիկ առանձին առաւելութիւն չունին: քան եկեղեցու այլ շրջանի մարդիկ:

ԱՄԵՐԻԿԱ

Տիեզերական քաղաքական ժողով Նիւեորկում. Այս անունն է կրում միսիոնարներին այն մեծ ժողովը, որ ապրիլի 21-ից մինչև մայիսի 3-ը գումարուեցաւ Նիւեորկում: Տիեզերական է կոչուում այս ժողովը այն պատճառով, որ 2400 պատգամաւորներ և միսիոնարներ աշխարհի զանազան կողմերից մասնակցում էին ժողովին: Բայց ամենաբազմաթիւն անունը մասամբ անյարմար է, որովհետև ժողովին մասնակից չէին կաթոլիկ և արևելեան եկեղեցիներն ներկայացուցիչները: Ժողովը բաց արաւ Միացեալ Նահանգներին նախկին Նախագահ Հարրիսոն մի վերին ատիճանին լուրջ և խորը կրօնական ճառով: Երեկոյեան ժողովականներին անձամբ ողջունեցին Միացեալ Նահանգներին ներկայ Նախագահը և Նիւեորկի պետութեան (Նահանգի) կառավարիչը: Ժողովն սկսուելուց յետոյ՝ առաջին կիւրակէն՝ Նիւեորկի 300 եկեղեցիներում քարոզում էին հիւր միսիոնարներն ու պատուորները: Chronik der Christ. Welt-ի ասելով՝ մի յօդուածով անկարելի է նկարագրել այն բազմաթիւ դասախօսութիւններն ու հարցերը, որ շաշափուեցան այս ժողովի մէջ: Քրիստոնէութեան տարածման ներկայ վիճակի, միսիոնի և պետութեան յարաբերութեան, միսիոնի պահպանութեան և կառավարութեան, միսիոնի և միւս կրօնների մէջ եղած յարաբերութեան, միսիոնի և ընկերավարական յառաջադիմութեան, միսիոնի և դատաւարականութեան, միսիոնի և բժշկականութեան և այլ բազմաթիւ հարցերի մասին դասախօսութիւններ կարդացուեցան, որ պէտք է երկու հաստատուող հատորի մէջ շուտով լոյս տեսնեն: Ժողովը գումարուած էր երկու նպատակով. նախ աշխարհի զանազան կողմերը ցրուած քաղաքի քարոզչական ընկերութիւններն ու նոցա աշխատաւորներին կապել միմեանց հետ և երկրորդ՝ պարզել քարոզչութեան ընդհանուր շահերը:

Գաղափարներում աշխարհի, յատկապէս Ամերիկայի աչքը այդ օրերը ժողովին էր դարձած: Ամերիկայի օրաթերթերը ամենայն մանրա-

մասնութեամբ հաղորդում էին ժողովի մէջ արձանուած խնդիրները և ժողովիցի համակրութիւնը վառում այս մեծ դործի համար: Նոյն իսկ կրօնական և եկեղեցական խնդիրներից միշտ իրենց հեռու պահող թերթերը ստիպուած էին խոստովանել քարոզչութեան նշանակութիւնը հասարակական, բարոյական և քաղաքակրթական տեսակէտներով:

Այսպիսի մեծ նշանակութիւն են տալիս քրիստոնէութեան և նորա տարածման լուսաւորեալ աշխարհում, իսկ ինչ են քարոզում մեզանում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ս. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Վեհափառ Հայրապետը մեր եկեղեցիների և վանքերի դրութեան հետ անձամբ ծանօթանալու և հարկաւոր կարգադրութիւններն անկու համար մայիսի 21-ին առաւօտեան 8 ժամին ուղեկցութեամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Ղեռնդ վարդապետի և այլոց մեկնելով Մայր Աթոռ Սուրբ Եղիշարդ գիւղը և բարեհաճեց զիջել Քյնի գիւղում: Հեռեկալ օրը, 22-ին առ. 8 ժամին գուրս գալով Քյնուց՝ երեկոյեան 9 ժամին հասաւ Սեան անապատ, որի վանահայր Տ. Սարգիս վարդ. Փիլոյիան մի քանի վարդապետներով ընդառաջել էր Նորին Սրբութեանը մինչև Յամաքարեղ:

Վեհ. Հայրապետ Սեանում երկու օր հանդիսաւ առաւ, զիտեց միաբանութեան համար կառուցուող սենեակներն ու բլրակի վերայ եղած վանքերը տանող ճանապարհը, միաբանութեանը կորայաբիրութեան ու ճշմարիտ կրօնաւորութեան խրատներ տալուց յետոյ 24-ին թողից կողին և շարունակեց ուղին Դիլիջանի վերայով դէպի Հաղարծնի վանքը: Այստեղ ևս Նորին Ս. Օծութիւնը երկու օր մնաց տաճարի և սեղանատան վերանորոգութեան համար հարկաւոր կարգադրութիւններն արաւ, անտառի բարւոք կառավարութեան համար պատշաճ հրահանգները տուեց վանքի վանահայր Միքայէլ վարդապետին և Քյնու անտառ-